ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿՐԿԻՆ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍՈՒՄ

ԺԱՄԱՆՈՒՄ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍ

Մայիսի 17-ին, հինգշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ Տ. Ներսես և Տ. Գրիգորիս եպիսկոպոսների, Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանի, ինչպես նաև Նորին Սրբությանը ընկերակցած Բուենոս Այրեսի հայոց թեմի Հայ Առաքելական Եկեղեցու վարչության մի շարք անդամների, Կորդոբայից կրկին մեկնում է Բուենոս Այրես:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նույն օրը, ժամը 18-ին, Արգենտինայի հայոց թեմի առաջնորդարանի ընդունարանում Վեհափառ Հայրապետին է այցելում Բուենոս Այրեսի հայ կաթողիկե համայնքի հովիվ հայր Կղեմես Մալճյանը:

* * *

Ժամը 18.30-ին, Վեհափառ Հայրապետը առաջնորդարանի ընդունարանում կրկին ընդունում է մի խումբ հայ համալսարանականների և շահեկաց կրոյց ունենում նրանց հետ հայ մշակույթի հետ կապված մի շարք հարցերի շուրջ:

* * *

Ժամը 19.30-ին, Վեհափառ Հայրապետը ընդունում է Բուենոս Այրեսի «Թեմպո» թերթի թղթակցին և պատասխանում նրա հարցերին:

* * *

Ժամը 21-ին Վեհափառ Հայրապետը այցելում է «Արմենիա» մշակութային կենտրոն: Ի պատիվ Վեհափառ Հայրապետի կենտրոնի ճաշասրահում տրվում է ընթրիք:

Վեհափառ Հայրապետը Արգենտինայի և Ուրուգվայի հայոց հոգևոր դասի հետ Բուենոս Այրեսի առաջնորդարանում

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ Ս. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ

Մայիսի 18-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով այցելում է Ս. Պողոս-Պետրոս եկեղեցի: Եկեղեցին լեցուն էր բազմաթիվ հայ հավատացյալներով:

Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս եպիսկոպոս Բունիաթյանը բարիգալստյան ջերմ խոսքով ողջունում է Նորին Սրբության ներկայությունը եկեղեցում և հրավիրում Նրան տալու Իր օրհնությունը ներկա հավատացյալներին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ Ս. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մեծ գոհունակություն կզգամ այս պահուս, որ կգտնվիմ ձեր մեջ, այս փոքրիկ եկեղեցվո կամարներուն տակ: Եվ ուրախ եմ, որ Բուենոս Այրեսի այս ծայրամասին մեջ գտնվող սույն փոքրաթիվ համայնքը իր աղոթքի Տունն ունի 1937-են ի վեր: Ես իմ օրհնությունը կբերեմ անոնց, որոնք նախաձեռնությունը ունեցան, ծրագիրը կազմեցին և իրագործեցին այս եկեղեցին կառուցելով: Իմ օրհնությունը մանավանդ բարերարներուն, որոնք բարեպաշտական զգացումներե մղված՝ կարողացան այս սիրուն եկեղեցին կյանքի կոչել, որպեսզի այս շրջանի մեջ ապրող մեր հայ հավատացյալները իրենց հոգեկան սնունդը, իրենց հոգեկան մխիթարությունը ստանան:

Ես գիտեմ, որ դուք մնայուն հոգևոր հովիվ չունիք, բայց ամիսը անգամ մը այստեղ ս. պատարագ կմատուցվի: Այդ լավ է, որովհետև կհավաքվին այս շրջանի հավատացյալները, որպեսզի չմոռնան մեր ավանդությունները, մեր սրբությունները, և որպեսզի այստեղ իրարու հանդիպելով՝ ավելի ջերմանա հայ համայնքային զգացումը, եղբայրական սերը հայերու միջև:

Մեր Եկեղեցվո կամարներուն տակ հավատացյալը իր հոգիի ճանապարհներով հաղորդակցության մեջ կմտնե Աստուծո հետ: Ամեն մեկը կուգա ուխտով մը, աղոթքով մը՝ խնդրելով Աստուծո օգնականությունը և ողորմությունը: Բայց Հայ Եկեղեցին նաև այն հավաքատեղին է, ուր հայ հավատացյալները իրարու մոտ կուգան, ուր իրենց հոգիները իրարու կհաղորդակցին ու այսպիսով կամրապնդվի ազգային եղբայրական սերը անոնց միջև: Սերը, սիրելիներ, աստվածային շնորհ մըն է՝ պարգևված մեզի բոլորիս: Այդ սերը պիտի գիտնանք պահպանել, աճեցնել և արժևորել մեր կյանքի ճանապարհին: Մեր Մայր Եկեղեցին այդ ճանապարհը կբանա մեր առջև, որպեսզի այդ աստվածային սերը կենդանի իրականություն դառնա հայ հավատացյալներու կյանքին մեջ:

Այսօր ես կբերեմ ձեզի նաև ողջույնը մայր հայրենիքի և օրհնություններ Ս. Էջմիածնեն: Ս. Էջմիածինը մեր սուրբ հավատքի պատմական կեդրոնն է՝ կառուցված մոտ հազար յոթը հարյուր տարի առաջ, առաջին հայկական եկեղեցին, որ այսօր ալ կանգուն է և պայծառ վիճակի մեջ, վերաշինված և բարեկարգ: Այդ հավատքի կեդրոնեն կճառագայթե օրհնությունը աստվածային ոչ միայն Հայաստանի մեջ բնակող հայերուն վրա, այլ նաև՝ ամբողջ հայության: Այդ օրհնության ճառագայթը մեր մարմնական աչքերով չենք կրնար տեսնել բնականաբար, ոգեղեն իրականություն մըն է, բայց բոլոր այն հայերը, որոնք հավատք ունին մեր ազգի և մեր ապագայի վրա, կտեսնեն Լուսավորչի կանթեղը և կզգան, որ անոր ճառագայթները իրենց ալ կբաշխվի:



Բուենոս Այրեսի հայոց Ս. Երրորդություն եկեղեցին

Ես կուզամ ձեզի հիշեցնելու այս ճշմարտությունը և մաղթելու, որ դուք բոլորդ ձեր հոգիները բանաք և ընդունեք Աստուծո օրհնության լույսը, որ նաև ձեզի կբաշխվի Ս. Էջմիածնեն, Լուսավորչի անմահ կանթեղեն:

Ես շատ գոհ մնացի ձեր հոբը հուպիչ և խմաստալից խոսքերեն: Հոգեշունչ խոսք էր՝ ազետարանական խոհերով ու հայրենասիրական զգացումներով: Կմաղթեմ Ձեզի, ձեր հայր, ուժ և կորով, որպեսզի նույն ներշնչանքներով շարունակեք ծառայել այս փոքրաթիվ համայնքին և Ձեր մատուցած սուրբ պատարագներով, Ձեր քարոզներով, Ձեր հովվական աշխատանքով կենդանի պահեք այս համայնքը իր հավատքին մեջ, իր հավատարմության մեջ դեպի Ս. Էջմիածինը և մայր հայրենիքը:

Թող Աստված միշտ շեն պահե այս աղոթքի Տունը և ձեզ բոլորդ պահե պահպանե քաջառողջ, ձեր բարի գործերու հաջողությամբ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍԻ Հ. Մ. Ը. Մ.-Ի ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Նույն օրը, ժամը 11-ին, Բուենոս Այրեսի Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միությունը կազմակերպում է հանդիպում Վեհափառ Հայրապետի հետ Հ. Մ. Ը. Մ.-ի սրահում:

Բացման խոսքով հանդես է գալիս Հ. Մ. Ը. Մ.-ի նախագահ պրն. Գևորգ Գարամանուկյանը: Ողջույնի և բարիգալստյան խոսք են ասում նաև Տ. Շավարշ ավագ քհն. Մեհրաբյանը, պրն. Պարգև Պաբսամյանը և ուրիշներ:

Վերջում օրհնության խոսքով հանդես է գալիս Նորին Սրբությունը՝ ուժ և եռանդ մաղթելով երիտասարդ մարզիկներին և գեղեցիկ հուշեր պատմելով Ռումինիայում երիտասարդության շրջանում Իր սկզբնական տարիներից:

Նույն օրը, ժամը 14-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Բուենոս Այրեսի հայկական գերեզմանատուն: Գերեզմանատանը գտնվող Ս. Երրորդություն մատուռի մեջ Նորին Սրբության բարձր նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան աղաշտոն «վասն ննջեցելոց հայոց»:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Նույն օրը, ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետը հայոց առաջնորդարանի ընդունելությունների դահլիճում ընդունում է Բուենոս Այրեսի հայկական վարժարանների ուսուցիչներին և տալիս Իր հայրական խորհուրդներն ու հայրապետական պատգամը՝ վեր հանելով հայ ուսուցչին վիճակված պատասխանատու դերը սփյուռքում հայապահպանման կարևոր գործում:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍԻ ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ

Կրթական բոլոր մշակները դժվարին պայմաններու մեջ կաշխատին, մեր նոր սերունդներուն հայեցի կրթություն տալու ի խնդիր: Ես ինքս ուսուցիչ եղած եմ, նույնպես սփյուռքի պայմաններու մեջ, որով կիասկնամ դժվարությունները,

որոնց կհանդիպի հայ դաստիարակը և՛ նյութական, և՛ բարոյական իմաստով: Ես կհիշեմ, որ Բուխարեստի հայոց վարժարանին մեջ դպրոցի բյուջեն միշտ դժվարությանց կհանդիպեր: Եվ կպատահեր երբեմն, որ ուսուցիչները երկու ամիս ամսական չկարողանային ստանալ: Բայց և բարոյական տեսակետով՝ ուսուցիչները միշտ չէ՝ որ կգնահատվեին ըստ արժանվույն: Կկարծեմ, որ հիմա, տարիներ անց, սփյուռքի կրթական մշակներու գործը ավելի դժվարացած է, ո՛չ ֆինանսական տեսակետով հավանաբար և ո՛չ ալ բարոյապես: Բայց այս անգամ ուրիշ դժվարություններ կան՝ հայ լեզուն կենդանի պահելու առումով, որովհետև սերունդները իրար հաջորդելով՝ երիտասարդները ավելի տեղական լեզուները կխոսին: Մայրենի լեզվի կենդանի պահպանումը բնական հոսանքի դեմ պայքարի բնույթ կստանա: Այդ պայքարը, ձեր պայքարը հերոսական աշխատանք է՝ վեր ամեն գնահատանքե: Արտասահմանի կյանքի մեջ գուցե ամենակարևոր աշխատանքը իր ուսերուն վրա կտանի կրթական մշակը: Կխորհիմ, թե բոլորդ, հայու տոկուն գիտակցությամբ կշարունակեք այդ պայքարը հանուն հայ լեզվի և հայ գիտակցության պահպանման: Շատ դժվար գործ է այդ, բայց իմ կարծիքով անկարելի չէ, հետևաբար ձեզի բոլորիդ կմաղթեմ հաջողություններ: Միշտ լավատես մնացեք, սիրեցեք ձեր գործը, աշխատեցեք անսասան հավատքով, պաշտեցեք մեր մայրենի քաղցր լեզուն, մեր հերոսական լեզուն:

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԵՐԵԿՈ «ԱՐՍԼԱՆՅԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 50-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Նույն օրը, երեկոյան ժամը 21-ին, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով ներկա է լինում «Արսլանյան» վարժարանի (այժմ՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ) հիմնադրման 50-ամյակին նվիրված գրական-գեղարվեստական հանդիսությանը՝ դպրոցի սրահում:

Հոբելյանական հանդիսությունը բաց է անում վարժարանի տնօրեն պրն. Պետրոս Հաճյանը հետևյալ խոսքով.

«Նորին Սրբություն Վեհափառ Տեր,

Այսօր կրկնակիորեն հուզիչ և նշանակալից օր մըն է մեզի համար, ապրումներով հարուստ և մեծապես սրտապնդիչ օր մը:

Նախ՝ որովհետև Դուք, Ամենայն Հայոց Հայրապետ, եկած եք Բուենոս Այրես ձեր ժողովուրդի կավակները տեսնելու և անոնց բերելու պարկ, բայց դարերու կշիռը ունեցող և դարերու տառապանք պարունակող պատվեր մը՝ **Քրիստոնյա ըլլալ ու մնալ**, ինչպես հայու համառությամբ գիտցան ըլլալ մեր սուրբ հայրերը, մեր հեպ ու համեստ, մեր նահատակ հայրերը մինչև իրենց շունչին ու արյան վերջին կաթիլը. և հայ ըլլալ ու մնալ այնպես, ինչպես Քրիստոս պատկերացուցած է իր իսկ խաչելությամբ, այսինքն՝ հոգիի հզորությամբ, կյանքի ու մահվան գնով:

Երկրորդ՝ որովհետև մենք այսօր կնշենք հիմնադրության հիսնամյակը լույսի, ուսման ու կրթության տաճարի մը՝ Արսլանյան վարժարանի, որ դարձյալ հիսուն տարի առաջ, ժամանակի չափականց համեստ պայմաններուն մեջ, քար առ քար կբարձրանար պարկ. բայց հաստատուն կամքով մը, պարկ, բայց մնայուն նպատակի մը համար՝ **հայ մնալ**, դիմանալ ժամանակին, պահպանել լեզու և նկարագիր, մշակույթ և ավանդություն, պաշտպանել մեր ցեղային դիմագծությունն ու բարոյական արժեքները, պաշտպանվիլ օտար, այլասերիչ ուժերու ներխուժումեն ու մնալ հայ, պահել Հայկեն, Մեսրոպեն և

Արսլանյան վարժարանի երգչախումբը և «Կոմիտաս» երգչախումբը համերգի ժամանակ

Հայոց պատմության բոլոր սուրբերեն ու հերոսներեն մեկի փոխանցված հկոր ոգին:

Խորհուրդ մը կա, Վեհափառ Տեր, ոգեկան և գաղափարական միասնություն մը Ձեր Սրբության կեցուցիչ այցելության և հայրենական ներկա հանդիսության տուն տվող շարժառիթին միջև: Դուք եկաք, որովհետև հայրենիքեն հեռու այս ափերուն, իրենց ազգային ինքնության գիտակից հայ կանգվածներ կան, Հայաստանյայց Եկեղեցվո ղողանջներուն ունկնդիր հավատացյալ հայեր. վերջապես՝ ազգային ապրումներու հարուստ դրամագլուխով օժտված և իր ենթակառույցներով կազմակերպված գաղութ մը, իր ժրաջան ու գործունյա առօրյայով, իր երիտասարդությամբ, հայ մնալու իր մնայուն պայքարով:

Իսկ այս բոլորը կան, այս բոլորը եղան, որովհետև հիսուն կամ ավելի տարիներ առաջ, սոսկալի ցեղասպանութենեն վերապրող հայ մարդիկ երբեք չհանձնվեցան ինքնալքումի, խուսահատության և դասալքության սպանիչ հոսանքին, այլ հերոսական թափով, հիանալի անձնազոհությամբ և զարմանալի կամքով հայկականության առաջին սերմերը նետեցին այս բարի հողերուս վրա: Անոնք, ծանր պայմաններու մեջ, գրեթե մինակ և անօգնական, բայց օժտված ցեղի ստեղծագործ տաղանդով, լծվեցան արժանթինահայ գաղութի կազմավորման դժվարին, տքնաջան աշխատանքին և իրենց մաքուր քրտինքով բարձրացուցին հայապահպանումի առաջին բերդերը:

Այսպես բարձրացավ նաև «Արսլանյան» վարժարանը:

Անցնող հիսնամյակին, հայակերտումի այս օջախը, ի հեճուկս բոլոր դժվարություններու և ժխտական երևույթներու, տվավ հայկական ապրումներով տոգորված և հայեցի դիմագծությամբ օժտված իրերահաջորդ սերունդներ, որոնք ապահովեցին մեր ժողովուրդի շարունակականությունը և հարաճուն կենսունակությունը, «Արսլանյան» վարժարանի հիսնամյա վաստակին մեջ իրենց ծառայության բաժինը ունեցան ակնիվ ազգայիններ և նվիրյալ ուսուցիչներ ու դաստիարակներ, որոնց բոլորին հարգանք ընծայելու համար է, որ կազմակերպված է այս հանդիսությունը, իբրև սրտի արդար պարտք և երախտագիտություն:

Խոսիլ «Արսլանյան» վարժարանի մասին, կնշանակե խոսիլ հայ դպրոցի կարևորության և փրկարար դերակատարության մասին:

Մարդ էակի գոյությունը հիմնավորելու համար, եթե կրնանք գործածել «կմտածեմ, ուրեմն կամ» փիլիսոփայական հղացքը, ուրեմն հայ մարդու կամ հայ հավաքականության գոյությունը պայմանավորելու համար կարելի է գործածել «կդիմադրեմ, ուրեմն կապրիմ» նշանախոսքը:

Հայ ժողովուրդը պետք է դիմադրե, որպեսզի ապրի: Պետք է դիմադրե, որպեսզի կուլ չերթա բազմաթիվ մշակույթներու և քաղաքակրթություններու հորձանքին, պետք է դիմադրե, որպեսզի կենդանի պահե հինեն եկող դարավոր մշակույթ մը, արյամբ մկրտված իր հավատքը, հայոց պատմության դյուցազնական և ողբերգական շեշտերով դարբնված մեր նկարագիրը, ապրելու մեր ոճը:

Ներկա հայության, և մասնավորաբար սփյուռքի հայության գոյատևումը պայմանավորված է ազգային մեր դիմադրականության ամրապնդումով: Իսկ դիմադրականություն՝ կնշանակե փարիլ մեր ցեղային ինքնության և արմատներուն, անխնա պայքար մղել ազգային բարքերու այլասերումին դեմ, հավաքական ուժի կազմալուծումին դեմ և մեկ հոգեպես, նկարագիրով տկարացնող վտանգներուն դեմ:

Մեր ազգային դիմադրականության գործոններն են՝

ա. Եկեղեցին.

բ. Մշակութային կազմակերպությունները և մտավորականությունը.

գ. Մեր քաղաքական կազմակերպությունները.

դ. Մեր վարժարանները:

Այս բոլոր գործոններու պայծառ ու կայտառ պահպանումը, անոնց ուժեղացումը և ներդաշնակ գործունեությունը մնայուն կերպով կերաշխավորեն հայության դիմագիծի ու բարոյական արժեքներու ապահովությունը: Սակայն թող ներվի մեկի այս բոլոր գործոններուն մեջ առաջնահերթությունը տալ հայ դպրոցին: Դպրոցն է օրորանը հայկականության և հայ մշակույթի, դպրոցն է հայակերտումի դարբնոցը, ազգային ոգի և գիտակցություն կազմավորելու վառարանը: Եթե Եկեղեցին կպայծառանա հավատացյալ մարդոց փարումով, եթե մշակույթը կհարստանա նոր սարքերով և ուժերով, և եթե մեր քաղաքական կազմակերպությունները պիտի որակավորվին անհատականություն ունեցող գործիչներով, ապա այս բոլոր մարդկային ուժերը կդարբնվին ու կպատրաստվին նախ և առաջ դպրոցի մեջ, նախ և առաջ դպրոցի շունչով:

Սխալ չըլլար մտածել, որ 5-րդ դարու ոսկեդարյան սերունդը այս համոզումով շրջեցավ Հայաստանի խավար անկյունները և դպրոցներու ցանցով օժտեց մեր հայրենիքը, որովհետև քաղաքական անկախության կորուստին ետք, մեկի կմնար պահպանել ու պաշտպանել մեր մշակութային անկախությունը, որուն գաղափարական սերմերը առաջին հերթին կնետվին դպրոցի մեջ: Ահա թե ինչու մեր ժողովուրդը նույնքան պաշտամունք ունեցավ դըպրոցին հանդեպ, որքան եկեղեցիին, և եկեղեցվո կողքին կանգնեցուց դպրոցը:

Այս դարուն ևս, 20-րդ դարուն, նույնանման վտանգներ կպատնան մեր ժողովուրդին, հետևաբար հայ դպրոցը կմնա փրկության լաստ մը աշխարհացրիվ հայության:

Վստահ ենք, որ 50 տարի առաջ այս համոզումով և հիմնական այս առաջադրանքով ճամփա ելան արժանթինահայ գաղութի առաջին դպրոցաշենները, շատ անգամ անանուն, շատ անգամ նույնիսկ դպրոց չտեսած հասարակ մարդիկ:

Այսօր արժանթինահայ գաղութը օժտված է դպրոցներու կազմակերպված ցանցով, և հայեցի դաստիարակությունը, թեև դարձյալ դժվարին պայմաններու մեջ, բայց կտարվի հարատևությամբ և օրինակելի նվիրումով: Շնորհիվ մեր կրթական հաստատություններուն, հայ լեզվի ծանոթությունը և ազգային պատկանելիության զգացումը տարվե տարի կարարպնդվին սեր նոր սերունդներուն մոտ:

Ասիկա անուրանալի նվաճումներեն մեկն է արժանթինահայ գաղութին և հատկապես մեր դպրոցներուն:

Կարևոր է ընդգծել նաև հայ դպրոցի այլ մեկ առաքելությունը, որն է՝ **հայակերտումը:** Հայ դպրոցի դերը չի սահմանափակվիր լեզուն սորվեցնելու մեքենական աշխատանքով, այլ մայրենի լեզվի կոլքին և իբրև լրացուցիչ **լեզու** հասկացողություն, հայ դպրոցը կպատրաստե ու կկազմավորե նաև հայ մարդը, հա՛յ քաղաքացին, որ կապրի իր ժողովուրդին տագնապներով և ցավերով, որ հաղորդակից է հայության անցյալին, ներկային ու ապագային կապված հարցերուն և որ անհատական իր էության մեջ ամբորեն փարած է իր սրբություններուն, հանձնառու է հանուն հայ ժողովուրդի գոյատևումին և արդար իրավունքներուն:

Պետք է նկատի ունենալ նաև հետևյալ կարևոր իրողությունը, որ բազմաթիվ հայ ընտանիքներ հայ դպրոցի միջոցավ կապված են մեր ազգային իրա-

կանության, հետևաբար հայ դպրոցը եղած է մեր կյանքի գլխավոր առացնաշներեն մեկը, որ, բացի հայեցի դաստիարակության իր գործեն, շարունակական ներգործություն ունի շատ մը հայ ընտանիքներե ներս, շարժման կմղե վանոնք, հանդիսանալով հաղորդակցության կարևոր միջոց մը ընդմեջ հայ ընտանիքին և հայ հավաքականության:

Հիսուն տարի առաջ կամ այսօր, արևասահմանի հայ ժողովուրդը կգըտնըվի նույն հարցերուն, նույն վտանգներուն և նույն տագնապներուն առջև՝ **հայապահպանում և հայ դատ:**

Արդ, առանց դպրոցի չկա հայապահպանում, և առացն հայապահպանումի չկա հայ դատ. ավելորդ է հայ դատ հետապնդելը: Հայ դատը խարսխված է՝ հայ մշակույթը, հայ հոգին և հայ միտքը իրենց ամբողջական արտահայտություններով հասցնել իրենց վախճանական հանգրվանին և մայր հողին:

Իսկ հայ մշակույթը, հայ հոգին և միտքը կպահպանվին հայ դպրոցի մեջ:

«Արսլանյան» վարժարանի հիսանմյակը թող կոչ մը ըլլայ արժանթինահայ մեր գաղութին, որ դպրոցի ճամփով տեր կանգնի իր սեփական մշակույթին: Պետք է ընենք այնպես, որ Նարեկացին շարունակե խոսիլ մեր երկյուղած հոգիներուն, Շնորհալին սարսռացնե մեր սիրտը, Կոմիտասը իր սիրո, կարոտի և տառապանքի մեղեդիներով ցնցե սեպ ու մեր կավակները:

Ըլլալ տեր մշակույթին՝ կնշանակե գիտակցիլ անոր արժեքին և ըմբոշխնել վայն: Ըլլալ պահապան մշակույթին՝ կնշանակե ոչ միայն լիանալ ազգային մշակույթի գանձերով, այլև գուրգուրալ անոնց վրա, վերարժևորել վանոնք: Նյութեղեն բոլոր գանձերը փոշի կդառնան, բայց ինչ որ մշակույթ է՝ կմնա հավիտյան: Բայց կմնա, եթե անոր տերը իր գոյության իմաստը շարունակե տեսնել իր մշակույթի ճառագայթող ջերմության ու գեղեցկության մեջ:

Մեր մշակույթի առաջին արտահայտությունը լեզուն է, որով խոսեցան Մեսրոպեն մինչև Դավիթ Անհաղթ, Նարեկացիեն մինչև Նաղաշ Հովնաթան, Աբովյան, Ռաֆֆի, Եղիշե Չարենց, Ահարոնյան և մեր նահատակ գրագետներու հոյակապ փաղանգը: Իսկ լեզուն կպահպանվի դպրոցով, առանց որուն չիք փրկություն:

Ես ինծի իրավունք կուտամ հոբելինական ներկա հանդիսությունը ընծայելու բոլոր անոնց, որոնք հյուսեցին, ծաղկեցուցին, գեղեցկացուցին մեր լեզուն՝ բանաստեղծությամբ, հանճարով ու շատ անգամ արյունով: Նաև՝ բոլոր անոնց, որոնք աշխարհի որևէ տեղ հայ դպրոց կառուցեցին, որպեսզի աշխարհի բոլոր լեզուներու շարքին ապրի մեր լեզուն, մեծասքանչ մեր լեզուն»:

Այնուհետև գրական-գեղարվեստական ճոխ ծրագրով հանդես են գալիս վարժարանի սաները՝ երգելով ազգային-հայրենասիրական երգեր և արտասանելով հայ բանաստեղծներից գեղեցիկ քերթվածներ:

Երեկոն ավարտվում է Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքով և «Պահպանիչ»-ով:

«ԱՐՄԵՆԻԱ» ՓՈՂՈՑԻ ԲԱՑՈՒՄԸ

Մայիսի 19-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը, ընկերակցությամբ Բուենոս Այրեսի քաղաքագլուխ դոկտ. Խուլիո Սալիերի, կատարում է «Արմենիա» փողոցի հանդիսավոր բացումը: Ինչպես նշվեց, մայիսի 10-ին, Բուենոս Այրեսի Քաղաքային Խորհրդի նիստում, որին ներկա էր եղել նաև Վեհափառ Հայրապետը, պաշտոնապես որոշվեց Ասեվեդո փողոցի մեկ մասը անվանել «Արմենիա»;

Բուենոս Այրեսի «Սոսինե» թաղամասի

Բացման հանդիսավոր արարողությունից հետո տեղի է ունենում միտինգ: Նախագահական ամբիոնում տեղ են գրավում Նորին Սրբությունը, Բուենոս Այրեսի հարգարժան քաղաքագլուխը, քույր Եկեղեցիների բարձրաստիճան հոգևորականներ, ինչպես նաև պետական և քաղաքային իշխանությանց ներկայացուցիչներ:

Բացման խոսքով հանդես է գալիս Հայկական Ուսումնասիրությունների Կենտրոնի տնօրեն պրն. Գևորգ Արծիվյանը:

Այնուհետև խոսք է առնում Բուենոս Այրեսի քաղաքագլուխ դոկտ. Խուլիո Սալիերը՝ բարձր գնահատելով արգենտինահայ գաղութի բերած նպաստը Արգենտինայի պետության զարգացման և բարգավաճման գործում:

Հանդիսավոր արարողությունը փակվում է Վեհափառ Հայրապետի խոսքով:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍԻ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՏ

Նույն օրը, ժամը 18-ին, հայոց առաջնորդարանում Վեհափառ Հայրապետը ընդունում է Բուենոս Այրեսի Տիկնանց Միության անդամներին և հաճելի զրույց ունենում նրանց հետ՝ վեր հանելով հայ կանանց դերի կարևորությունը հայ ազգային եկեղեցական կյանքում:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԱՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Նույն օրը, երեկոյան ժամը 21-ին, Վեհափառ Հայրապետը Իր շնորհաբեր այցելությամբ պատվում է Մարաշի Հայրենակցական Միությունը:

Հանդիսության ընթացքում Մարաշի Հայրենակցական Միության անունից բարիգալստյան անկեղծ խոսքով հանդես է գալիս միության անդամ պրն. Հայկ Լոմլոմջյանը՝ ասելով.

«Վեհափառ Տեր,

Արժանթինահայ գաղութը և ի մասնավորի արժանթինահայ մարաշցիներս մեծ հրճվանքով և երախտագիտությամբ կընդունինք Ձերդ Սրբության հայրական այս երրորդ այցելությունը Իր հեռավոր այս հոտին, որու համայն կհայտնենք մեր խորին շնորհակալությունները:

Ես կուզեի շեշտել մարաշցիներուս մասնավոր ուրախությունը, քանի որ 1968 թ. Նորին Սուրբ Օծության ներկայությամբ և օրհնությամբ կատարեցինք պաշտոնական բացումը մեր այս «Նոր Մարաշ» տան: Եվ ահա տասնվեց տարիներ վերջ կրկին կընդունինք Ձեզ և կվերապրինք հիշարժան այդ օրերը: Երախտապարտ ենք Բուենոս Այրեսի մարաշցիներս Ձեր այցելության համար և կայն կհամարենք Աստուծո կողմե վարձատրություն մը մեր եկեղեցասեր, կրթասեր և հայրենասեր զգացումներուն և աշխատանքներուն: Պիտի ջանանք այդ զգացումները միշտ վառ պահել մեր սրտերուն և գործունեության մեջ, պիտի աշխատինք կանոնք փոխանցել նոր սերունդներուն՝ մեր աչքերը միշտ հառած դեպի Ս. Էջմիածին և վերածնած մեր հայրենիքի կենդանի իրականությունը:

Մեր միությունը այս տարի կբոլորե իր հիմնադրության 60-ամյակը: Բուռ մը մարաշցիներ, որոնք վերապրողներն էին Ապրիլյան մեծ Եղեռնի և մասնակիցներն ու վկաները 1920 թ. Մարաշի հերոսական ինքնապաշտպանության, եկան այս հյուրընկալ ափերը իրենց հարազատներուն կտոր մը հաց և խաղաղ օրեր տալու: Բայց անոնք չմոռցան իրենց ծննդավայր Մարաշը, իրենց

հերոս նահատակները, որոշեցին անմիջապես իրարու մոտ գալ և 1924-ին հիմնեցին այս միությունը և ապա կառուցեցին այս տունը, որպեսզի անոր երդիկներուն տակ հայ պահեն իրենց վավերները, անոնց ներշնչեն մեր պապենական մաքուր զգացումներն ու սովորությունները:

Անցեր են վաթսուն տարիներ, անոնցմե շատեր անդարձ հեռացեր են մեզմե: Այսօր մեր միությունը զարգացած ու մեծցած է, ան կիսամախմբե հավարավոր մարաշցիներ, որոնք սերտ կապեր ստեղծած են իրարու միջև և կգործակցին միասնական ոգիով՝ բոլորն ալ նվիրված ազգապահպանման նվիրական գործին:

Այսօր, Վեհափառ Տեր, Դուք կտեսնեք մեր երրորդ նոր սերունդը, որոնք կողք-կողքի իրենց ծնողաց և պապերուն հետ, կհրձվին Ձեր ներկայությամբ իրենց հոգիներն ու աչքերը հառած Ս. Էջմիածնին և մայր հայրենիքին:

Կմաղթեմ Ձեզի արևշատություն: Թող անսասան մնա Ս. Էջմիածինը և անոր արժանավոր Գահակալը»:

Հանդիսության ավարտին Վեհափառ Հայրապետը տալիս է Իր հայրական հորդորներն ու հայրապետական պատգամները՝ հույս հայտնելով, որ միությունը միշտ իր կարելին կանի ազգապահպանման և հայ մշակույթի տարածման համար Արգենտինայի հայ գաղութում:

Հանդիսությունն ավարտվում է Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով և «Հայր մեր» աղոթքով:

*
* *

Նույն օրը Վեհափառ Հայրապետին իրենց հյուրընկալ ընտանեկան հարկի տակ ճաշկերույթով պատվում են Գևորգ և Հակոբ Գարակյոզյանները:

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ԲՈՒԵՆՈՍ ԱՅՐԵՍԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Մայիսի 20-ին, կիրակի.—Տոն Երևման Ս. Խաչի:

Այսօր, առավոտյան ժամը 10-ին, Բուենոս Այրեսի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարում սուրբ պատարագ է մատուցում Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ վեր հանելով Երևման սուրբ Խաչի տոնի խորհուրդը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ սրբական արարողության, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ տեղի է ունենում «Արսլանյան» մանկապարտեզի հիմնարկեքը:

ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՈՂՋԵՐԹԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, երեկոյան ժամը 21-ին, Բուենոս Այրեսի «Իյոստալ Դել Լագո» հյուրանոցի ճաշասրահում Բուենոս Այրեսի հայոց թեմի կենտրոնական վարչությունը կազմակերպում է համագաղութային ողջերթի ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Ընդունելությանը ներկա էին Տ. Ներսես և Տ. Գրիգորիս եպիսկոպոսները, Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը, Բուենոս Այրեսի հայոց թեմի կենտրոնական վարչության անդամները, ազգային բոլոր կուսակցությունների և միու-

թյունների ներկայացուցիչները, ինչպես նաև քույր Եկեղեցիների բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Ընդունելությանը ներկա էր նաև Արգենտինայի խորհրդարանի նախագահ պրն. Խուան Կառլոս Պուկլիեսեն:

Վեհափառ Հայրապետին ուղղյալ ողջերթի հակիրճ խոսքով առաջինը հասդես է գալիս հանդիսության հաղորդավար պրն. Ռուբեն Քեշիշյանը:

Հանուն Բուենոս Այրեսի թեմի կենտրոնական վարչության, խոսք է առնում վարչության անդամ պրն. Ջորջ Փուշիճյանը՝ ասելով.

«Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց.

Անհուն գոհունակությամբ եկած ենք արժանթինահայ գաղութը ներկայացնող Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո Կեդրոնական Վարչության պաշտոնական խոսքը բերելու այսօրվա ողջերթի սեղանին՝ նվիրված մեր թանկագին Վեհափառ Հոր և Իր շքախումբին:

Անկարելի պիտի ըլլա այս պահուս բառերով նկարագրել մեր հոգեկան բոլոր ապրումները, կոր վայելեցինք մոտ երեք շաբթվա ընթացքին: Զանոնք արտահայտելու համար պետք է պատկերացնեք մեր բոլոր հանդիպումները՝ մեր Մայր տաճարեն սկսելով մինչև հայ վարժարաններն ու ծերանոցները, մշակութային և մարզական սրահներեն մինչև պետական և նախագահական պալատները և Ձերդ Վեհափառության բոլոր այցելություններու առիթով արտասանված պատգամներն ու հայ և օտար ունկնդիրներու զգացումները:

Վեհափառ Տեր, Ձեր այս պատմական երրորդ այցելությամբ Հարավային Ամերիկա, Դուք եռապատկեցիք մեր հավատքը դեպի Ս. Էջմիածին, մեր սերը դեպի մայր հայրենիք և Արարատի նման զորացուցիք որպես հայ գոյատևելու մեր կամքը:

Կհուզվինք, երբ կմտածենք, որ կմոտենա բաժանման պահը, բայց կոգևորվինք, երբ բոլորս, մեծ ու փոքր անխտիր, կզգանք, որ այս Ձեր շնորհաբեր այցելությամբ Դուք միշտ ներկա պիտի մնաք մեր մեջ, և Ձեր օրհնությունները մեզ պիտի առաջնորդեն՝ շարունակելու համար մեր աշխատանքը այս գաղութին մեջ համերաշխորեն, մեկ անձի նման, բոլորս ձեռք-ձեռքի տված և աչքերնիս սևեռած միշտ դեպի մայր հայրենիք և Ս. Էջմիածին:

Ձեր իմաստուն և խրախուսիչ պատգամները, արտասանված ամեն տեղ անխտիր, քանդակված պիտի մնան մեր հիշողության մեջ: Դուք սփռեցիք սեր, հարգանք, համերաշխություն, խաղաղություն, զորացուցիք մեր հավատքը դեպի մեր ազգային և մարդկային արդար իրավունքները: Դուք ոսկի գիրերով գրեցիք մեր սրտերուն մեջ բոլորանվեր ծառայել Հայաստանին՝ մտքով, հոգիով, խոսքով, և եթե պետք ըլլա, նաև բազուկներով:

Վեհափառ Տեր, մենք բոլորս վստահ ենք, որ Ձեր Սրբությունը լավագույն ձևով պիտի կարողանա հաղորդել մեր այս զգացումները հայրենի մեր եղբայրներուն, և կխնդրենք, որ վստահեցնեք զանոնք, որ հայրենիք և սփյուռք օտարներ չեն իրարու, այլ մեկ ազգ են՝ զիրար լրացնող, նույն նպատակներով ապրող: Պիտի ապրինք իբրև հայ և մեր բոլոր ուժերով պիտի ջանանք պահել ու պաշտպանել մեր լեզուն, մեր Եկեղեցին և մեր ազգային արդար իրավունքները մինչև ավելի լուսաշող օրեր:

Բարի ճանապարհ մաղթելով Ձեզի, Վեհափառ Տեր, Աստուծմե կխնդրենք առողջ և երկար կյանք Ձեր Սրբության, որպեսզի ավելի երկար տարիներ գահակալեք Սբ. Գրիգոր Լուսավորչի հավիտենական Աթոռին»:

Ճաշկերույթի ընթացքում խոսք են առնում նաև խորհրդարանի նախագահ

պրն. Խուան Կառլոս Պուկլիեսեն, Տ. Գրիգորիս եպս. Բունյաթյանը և Տ. Ասողիկ աբեղա Արիստակեսյանը:

Այս առթիվ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին ի նպաստ կատարած իրենց կարևոր նվիրատվությունների համար Վեհափառ Հայրապետը Ս. Գրիգոր Լուսավորչի Ա կարգի շքանշանով պարգևատրում է տիկին Արփինե Սեֆերյան-Վարդապարոնյանին, պրն. պրն. Եդվարդ Սեֆերյանին, Հակոբ Գարակեոլյանին, Գևորգ Գարակեոլյանին և Գրիգոր Դերձակյանին:

Ի գնահատումն Մայր Աթոռի պայծառության համար իրենց կատարած նվիրատվությունների, Ս. Գրիգոր Լուսավորչի շքանշանով պարգևատրվում են նաև պրն. պրն. Խոլե Ճոնապյանը, Հովսեփ Յուսուֆյանը, Արմեն Մեծատուրյանը և Վահրամ Պոյաճյանը:

Իրենց ազգօգուտ մշակութային և եկեղեցական ծառայությունների համար Վեհափառ Հայրապետը տիարք Ժան Ալմուխյանին և Պետրոս Նահարյանին պարգևատրում է «Ս. Սահակ—Ս. Մեսրոպ» շքանշանով, իսկ տիարք Հովհաննես Ռագուպյանին և Անդրանիկ Արզանյանին՝ «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով:

Նույն առթիվ Հայոց Հայրապետը օրհնության կոնդակներ է շնորհում բարեշնորհ սարկավագներ Նուպար Տիշչեքենյանին, Վարդգես Կեռոյանին, ինչպես նաև ազգայիններ Մաքրուհի Էոլմեսեքյանին, Հերսինե Մալխասյանին, Հայկուհի Քեմանյանին, Տիգրանուհի Մյուրեքյանին, Ռոսա Շահինյանին, Հրանուշ Պալյանին, Պարգև Տեր-Կարապետյանին, Օհան Քորուքին, Սամվել Մարկոսյանին և Էմիրյան եղբայրներին:

Ճաշկերույթն ավարտվում է Վեհափառ Հայրապետի օրհնության խոսքով:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՈՂՋԵՐԹԻ ՃԱՇԿԵՐՈՒՅԹՈՒՄ

Ինձ կթվի, թե երեկ եկա: Մեր այցելության ծրագիրը բավական ծանրաբեռնված էր, և ես իրապես հոգնեցա, բայց երևի հոգնություններ կան, որոնք կկազդուրեն մարդը, կվերանորոգեն մարդու հոգին և նույնիսկ մարմինը: Ինձ կթվի, թե պիտի վերադառնամ քիչ մը ավելի երիտասարդացած: Սքանչելի տպավորություններով գոտեպնդված, ավելի զորացած ու լավատես դեպի մեր Եկեղեցիի ու ազգի ապագան, կվերադառնամ մեր տունը՝ Հայաստան:

Իմ առաջին մտածումը այս պահուն կուղղվի դեպի այս քրիստոնյա, հյուրընկալ երկիրը՝ Արգենտինան և անոր ժողովուրդը՝ այնքան հոգատար դեպի հայ համայնքը: Տասնամյակներ առաջ Արգենտինան իր դռները բացավ հայ գաղթականներու առջև և անոնց շնորհեց ամեն նպաստավոր պայման, որպեսզի անոնք իրենք վիրենք զգան իրենց իսկական տունին մեջ: Եվ այսպես, մեր Եկեղեցվո զավակները ապրեցան՝ պահպանելով իրենց կրոնական հավատքը, եկեղեցիները, կրթական հաստատությունները, մշակութային կազմակերպությունները և մնալով հավատարիմ, շինարար, օրինապահ քաղաքացիները այս հայրենիքին: Գիտեմ, որ կսիրեք Արգենտինան, գիտեմ, որ կգնահատեք զայն և երախտապարտ եք, բայց թույլ տվեք ձեզի բերել նաև վկայությունը այն բանի, որ մենք ևս, թեև հեռու ձեզմե, նույնքան երախտապարտ ենք արգենտինյան պետության և ժողովուրդին:

Ես երբեք չպիտի մոռնամ այն բարձր պատիվները, որ ընծայվեցան ինձի պաշտոնական ամենաբարձր մակարդակի վրա՝ սկսելով Հանրապետության նախագահեն մինչև մեր հարգելի կրոնից նախագահը, որ այստեղ կգտնվի:

Իմ կյանքի ամենահանդիսավոր օրերը պիտի մնան կոնգրեսի հանդիսավոր բացման նիստը և քաղաքային երեսփոխաններու ժողովը, ուր որոշումը տրվեցավ «Արմենիա» փողոցին: Կրկին անգամ իմ շնորհակալությունները մեծահարգ պրն. նախագահին, մեծահարգ կրոնից նախագահ դոկտ. Բռավոյին և բոլոր պետական բարձր անձնավորություններուն:

Այս պահուն պարտիմ շնորհակալություն հայտնել Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցական համայնքի Կեդրոնական Վարչությանը, Ընդունելության Հանձնաժողովի և Պատվո Հանձնաժողովի բոլոր անդամներուն, որոնք սրբական առաջնորդի հետ միասնաբար, տիվ և գիշեր աշխատեցան և հնարավոր դարձուցին այս սքանչելի ընդունելությունները՝ ծրագրված իրենց կողմե: Ես գոհունակությամբ հաստատեցի, որ այս հանձնաժողովները իմաստությունը ունեցան հրավիրելու նաև տարբեր կազմակերպությանց ներկայացուցիչները, որպեսզի Ամենայն Հայոց Կաթողիկոսը ընդունվի ամբողջ համայնքի կողմե, միասնաբար, ինչ որ ինձ համար հոգեկան մխիթարություն եղավ: Ինչպես շատերը ցանկություն արտահայտեցին, ես ալ կմիանամ անոնց՝ ըսելով, որ իմ մեկնելեն հետո շատ ըղձալի է, որ այդ միության ոգին պահպանվի գոնե կարևոր առիթներով: Եկեղեցին է առավելապես, որ իր բոլոր վավակները կհամախմբե նույն հարկի տակ, հետևաբար միասնության և համագործակցության հիմնական վեմը, առաջնորդող ոգին մեր Ս. Եկեղեցին է և անոր սրբազան առաքելությունը: Վստահ եմ, որ եկեղեցական, վարչական մարմինները այստեղ ուղիղ կհասկնան այս միտքը և միշտ պիտի աշխատին այդ ըմբռնումով ղեկավարել Եկեղեցին:

Անշուշտ այս ճանապարհի վրա վճռական դեր ունի ձեր հոգևոր առաջնորդը՝ գերաշնորհ Տ. Գրիգորիս եպիսկոպոսը, որ այդ ոգիով է ներշնչված: Առանց իր համեստությունը վիրավորելու, անկեղծորեն պետք է վկայեմ, որ Տ. Գրիգորիս եպիսկոպոս ուղիղ ճանապարհի վրա կգտնվի: Կշնորհավորեմ զինք և կմաղթեմ, որ այդ ճանապարհով հետզհետե առավել գործունեություն ծավալե, որպեսզի Եկեղեցիի շուրջ հավաքվի ամբողջ համայնքը, մանավանդ երիտասարդությունը:

Այս առիթով կուզեմ իմ գնահատանքի խոսքն ուղղել մյուս հոգևոր հայրերուն՝ Մուշյան ծայրագույն վարդապետին, Գիսակ վարդապետին և քահանա հայրերուն, որոնք հոգատարությամբ իրենց պարտականությունները կկատարեն ի հոգևոր շինություն այս ժողովուրդին:

Կուզեմ շարունակել խոսքս միասնականության մասին և ավելցնել նաև, որ, արտահայտելու համար կենդանի կերպով համայնքային կյանքի մեջ այդ միասնության ոգին, ես կփափագեի, որ գոնե չորս հիշարժան տարեթիվեր ամբողջ գաղութը միասնաբար տոնախմբե.

ա. Վարդանանց պատերազմի հիշատակը. բ. Ապրիլի 24-ը. գ. Սարդարապատի ճակատամարտը. և դ. Թարգմանչաց տոնը որպես հայ մշակույթի տոն:

Այս չորս տոնախմբումները գրեթե ամբողջապես կխտացնեն մեր ժողովուրդի և Եկեղեցիի հոգևոր-ազգային գիտակցությունը:

Կուզեի ավելցնել նաև իմ հորդորը, որ այստեղի եկեղեցական կազմակերպությունը առավել ամուր և տևական հիմերու վրա դնե եկեղեցական կյանքը կանոնագրի որոշ բարեփոխումներով՝ համաձայն մեր Եկեղեցվո ավանդական կանոններուն, համաձայն ժողովրդավարական սահմանադրական սկզբունքներուն և նաև այս երկրի օրենքներուն: Այս մասին ես առանձին տեսակցություն ունեցա Կեդրոնական Վարչության հետ և ինչ որ հարկ էր

կարողացա արտահայտել: Հույս ունիմ, որ մոտ ապագային իմաստությամբ և հեռատեսությամբ այս ծրագիրը կյանքի կկոչվի:

Սիրելի ժողովուրդ, ես ամեն ինչ պիտի հիշեմ սիրով և կարոտով. դուք շատ ջերմությամբ ինձ ընդունեցիք, կրկին իմ շնորհակալությունները:

Կաղոթեմ, որ Աստված պարգևե աշխարհին կայուն խաղաղություն, որպեսզի ազգությունները փոխադարձ գործակցությամբ շարունակեն երկրագունդի մարդկության կյանքը պահպանել Միացյալ Ազգերու Կազմակերպության սկզբունքներով, և մեր տանջված ժողովուրդը այլևս չտեսնե սուգի, ողբի և որբի օրեր և շարունակե իր վերածնունդը հասցնել ավելի բարձր կատարներու՝ հասնելու համար իր արդար իղձերու իրականացման:

Գիտեմ, որ արտասահմանի հայությունը հերոսական պայքար կմղե՝ պահպանելու իր ինքնությունը, իր արժանապատվությունը, որպեսզի հետապնդե հայ ազգի իրավունքներու պաշտպանությունը: Դժվար է օտարության մեջ իբրև հայ ապրիլ, բայց կխորհիմ, թե մեր ժողովուրդի ճակտին վրա գրված է՝ «հավատք, պայքար և հաղթանակ». ամեն:

«ԳԵՎՈՐԳ ՉՆՆՈՂՅԱՆ» ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒՄԸ

Մայիսի 21-ին, երկուշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարում նախագահում է ազգային գործիչ հանգուցյալ Գևորգ Չննողյանի և նրա գերդաստանի ննջեցյալների հիշատակին կատարված հոգեհանգստյան արարողությանը:

Հավարտ արարողության, Ս. Գրիգոր Լուսավորիչ վարժարանի երկրորդական բաժինը Բուենոս Այրեսի Կենտրոնական Վարչության որոշումով կոչվում է Գևորգ Չննողյանի անվամբ:

Այս առթիվ, հանուն Կենտրոնական Վարչության, խոսք է առնում դոկտ. Անդրանիկ Արսլանյանը՝ վեր հանելով հանգուցյալի և նրա որդի պրն. Վահե Չննողյանի կրթանվեր, ազգաշեն ու եկեղեցաշեն գործունեությունը:

Այնուհետև դպրոցի ճաշասրահում մատուցվում է սիրո ճաշ: Այն անցնում է խանդավառ և հուզիչ մթնոլորտում և ավարտվում Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և «Պահպանիչ»-ով:

ՈՂՋԵՐԹԻ ՀԱՄԵՐԳ Ի ՊԱՏԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Նույն օրը, երեկոյան ժամը 22-ին, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, կազմակերպվում է ողջերթի համերգ: Ելույթ է ունենում Արգենտինայի հայկական երգչախումբը՝ խմբավար պրն. Ալմուխյանի ղեկավարությամբ: Հայտագրում տեղ էին գտել հայկական ժողովրդական երգեր՝ Կոմիտաս վարդապետի և Մակար Եկմալյանի մշակումներով:

Ողջերթի համերգից հետո Արգենտինայի Հայ Առաքելական Եկեղեցու կենտրոնական վարչության քարտուղար պրն. Հովհաննես Ռագուպյանը հանդես է գալիս Վեհափառ Հայրապետին ուղղված հետևյալ ողջերթի խոսքով.

«Նորին Սրբություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոս,

Հարգելի ներկաներ,

Ընդառաջելով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո կեդրոնական վարչության հրավերին, Բուենոս Այրես ժամանեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Առաջինը՝ հայրապետական Իր օրհնաբեր այցելությամբ

ծանոթանալու համար այս ափերու հայ կանգվածներու հոգևոր և ազգային կյանքին:

Այսօր արդեն անցած են Վեհափառի այցելության 21 օրերը, և Նորին Սրբությունը չորեքշաբթի օր կբաժնվի արժանթինահայ գաղութեն:

Վարչությունը և ընդունելության հանձնաժողովը պատրաստած էին հանդիսություններու, այցելություններու, տեսակցություններու և հանդիպումներու բավական խճողված ծրագիր մը, որ գործադրվեցավ գրեթե տառացիորեն, կարգապահ մթնոլորտի մեջ, սիրո և խանդավառության ջերմ պայմաններով:

Հակառակ այս հոգնեցուցիչ ծրագրին, ծերունավարդ Հայրապետը ընդառաջ գնաց կազմակերպված բոլոր հանդիսություններուն, այցելեց բոլոր դըպրոցներն ու հաստատությունները, եկեղեցվո խորաններեն թե սրահներու բեմերեն խոսեցավ մեր ժողովուրդին, ներկա եղավ ի պատիվ Իրեն կազմակերպված հանդիսություններու և ճաշկերույթներու և ամեն տեղ Իր խոսքով, Իր սրտաբուխ և անկեղծ շունչով, օրհնություններով և պատգամներով հուզեց ու խանդավառեց մեզ, վերանորոգեց ազգասիրական մեր զգացումները, վերահաստատեց մեր ծառայելու կամքը, ամրապնդեց ապագայի նկատմամբ մեր հույսը և մեր մեջ զորացուց քրիստոնեական հավատքը:

Վեհափառ Հայրը երբեք չգանգատեցավ ճամփոյդություններեն, տեղափոխություններեն և իրարու հաջորդող այցելություններեն և հանդեսներեն, չմերժեց որևէ հրավեր, եղավ բոլորին հետ, լսեց բոլորը և հասավ ու խոսեցավ բոլորին:

Մեր ժողովուրդը իր կարգին սիրով ու խանդաղատանքով շրջապատեց իր Հայրապետը՝ անոր անձին ու վեհության մեջ տեսնելով խորհրդանիշը մեր դարավոր հավատքին ու Եկեղեցիին: Կարծես հայոց պատմության ձայնը կլսվեր Վեհափառ Հոր բերնեն, կարծես Իրմով կխոսեին հայոց հուժկու հերոսները և մաքրամաքուր սուրբերը: Ուր որ գնաց Վեհափառը, ուր որ խոսեցավ, խոսեցավ մեր ամենեն մաքուր զգացումներուն և արժեքներուն մասին: Իրեն հետ սրահ մտցուց հայոց հին Հայրապետներու սրբական հավատքը, դարերու շունչը և ոգին:

Վեհը թելադրեց մեզի՝

— Ամուր պահել մեր ազգային դիմագիծը:

— Պահպանել մեր քրիստոնեական հավատքը և բայոյական նկարագիրը:

— Փարիլ Հայաստանյայց Եկեղեցիին, սիրել զայն ու ծառայել անոր:

— Սփյուռքի դժվարին պայմաններու մեջ չհուսահատիլ երբեք և պայքարիլ հայապահպանումի համար:

— Ներշնչվիլ մեր հերոսներեն և Սարդարապատի ոգին վառ պահել հոգիներու մեջ:

— Պայքարիլ մեր բռնագրավված Արարատին համար:

— Սիրել հայրենիքը, Ս. Էջմիածինը, մեր դարավոր արժեքներն ու փառքերը՝ ժամանակավոր բոլոր երևույթներեն վեր:

— Հայ մնալ, քրիստոնյա մնալ, լավ քաղաքացի մնալ արժանթինյան հայրենիքին:

Վեհափառ Հոր այս այցելությունը պասմական ու անմոռանալի պիտի մնա մեր գաղութին մեջ, որովհետև ուժի, հավատքի, հայրենասիրության և համերաշխության աղբյուր եղավ մեզի համար, ազգային խանդավառության և հոգևոր մխիթարության պատեհություն մը, և վստահ ենք, որ Իր խոսքերն ու պատգամները երկար ժամանակ պիտի հնչեն մեր ականջներուն մեջ, մեզի առաջնորդ պիտի ըլլան մեր հանրային գործունեության թե անհատական

կյանքին մեջ, պիտի ուղղեն մեր քայլերը, մեր աչքերը տևաբար հառած պիտի պահեն Ս. Էջմիածինին՝ հավատք ներշնչելով մեզի, որ հոն կա մեր ցավերու, մեր տառապանքներու, մեր հաղթանակներու և ուրախություններու հաղորդակից Հայրապետ մը, գուրգուրանքով, մտահոգությամբ կեղուն Հայր մը:

Ըլլա մեր սրահներուն մեջ, ըլլա մեր եկեղեցիներու կամարներուն տակ, Վեհափառ Հայրը մեզի պատճառեց հպարտության, հուզումի, ուրախության և արցունքի պահեր, որոնք երբեք պիտի չսրբվին մեր հիշողութենեն:

Դպրոցներու մեջ մեր Հայրապետը խոսեցավ մեր նորահաս սերունդներուն, անոնց շունչ փոխանցեց, անոց խոսեցավ հայրենիքեն ու հայոց պատմութենեն, խոսեցավ մեր տաղանդավոր ժողովուրդի իրագործումներու և նվաճումներու մասին, հայու հպարտություն և կամք փոխանցեց անոնց և նաև ցույց տվավ բռնագրավված Արարատը, որպես կյանքի նպատակ:

Հպարտության անմոռանալի պահեր ունեցանք, երբ Վեհափառ Հայրապետը դուրս ելավ հայկական շրջանակեն և տեսնվեցավ պետական բարձրաստիճան անձնավորություններու հետ:

Իր այցելության առիթով, արժանթինյան կառավարությունը և Քաղաքապետական Խորհուրդը Նորին Սրբությունը հռչակեցին պետության և մայրաքաղաքի պատվո հյուրը:

Իր այցելությունը առիթ մը եղավ, որ արժանթինյան իշխանությունները, կրոնական, պետական, քաղաքական ու մտավորական անձնավորություններ, արտահայտեն իրենց համակրանքը հանդեպ մեր ժողովուրդին, որ ցեղասպանութենեն փրկվելով՝ այս հայրենիքի մեջ գտավ ապատություն և ամեն կարելություն, պահպանելու համար իր ավանդությունները և արժեքները:

Իր տեսակցություններու ընթացքին Վեհափառ Հայրը թարգմանը եղավ հայ ժողովուրդի երախտագիտական զգացումներուն հանդեպ Արժանթինի և այս երկրի ազնիվ ժողովուրդին:

Իր բոլոր տեսակցություններու ընթացքին Վեհափառը ընդգծեց արժանթինյան և ուրուկվայյան հայրենիքներու ազնիվ վերաբերումը հանդեպ մեր ժողովուրդին, արտահայտեց Հայաստանյայց Մայր Եկեղեցվո անհուն շնորհակալությունը:

Արտահայտելու համար իր համակարանքը հանդեպ մեր ժողովուրդին՝ նախագահ Ռաուլ Ալֆոնսին ըսավ. «Դուք սքանչելի գաղութ մը ունիք, կընենք հպարտ ըլլալ»:

Վիկտոր Մարտինես ըսավ. «Ձեր օրինությունները և մաղթանքները ավելի հանձնառու կդարձնեն մեզ հանդեպ հայ ժողովուրդին»:

Դոկտոր Պուկիեսե ըսավ. «Ես կփափագիմ, որ իմ կառավարությունս անգամ մը ևս ճանչնա ձեր երկիրն ու պետությունը»:

Վեհափառ Տեր,

Ձեր այցելության օրերը բավարար չափով երկար թվեցան մեզի, որովհետև այնքան կարճ օրերու մեջ մեզի փոխանցեցիք այնքան շատ ապրում և հուզում: Նաև կարճ թվեցան, որովհետև այնքան լսելիքներ ունեինք տակավին Ձեր Սրբութենեն:

Հանուն Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո Կեդրոնական Վարչության, հանուն Ընդունելության Հանձնախումբին, հանուն արժանթինահայ գաղութին, Ձեզի կմաղթեմ բարի ճանապարհ, Վեհափառ Տեր, Ձեզի կմաղթեմ երկար կյանք և արևշատություն, որպեսզի Ձեր խոսքն ու շունչը շարունակեն տակավին երկար ժամանակ առաջնորդ ըլլալ մեզի:

Գացեք հանգիստ սրտով, Վեհափառ Տեր, գացեք ուրախ ու խաղաղ հոգիով. մենք պիտի շարունակենք հավատարիմ մնալ մեր ազգային ինքնության, պիտի պահենք մեր դպրոցները և Եկեղեցին, պիտի պահենք մեր ավանդությունները և լեզուն ու պիտի պայքարինք մինչև որ Մասիսը դարձյալ հայերեն խոսի:

Շնորհակալ ենք, Վեհափառ Տեր, բարի ճանապարհ Ձեզի»:

Այնուհետև հրաժեշտի խոսքով հանդես է գալիս Նորին Սրբությունը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՐԱԺԵՇՏԻ ԽՈՍՔԸ ՈՂՋԵՐԹԻ ՀԱՄԵՐԳԻՑ ՀԵՏՈ

Աստուծո ողորմությամբ մոտ մեկ ամիս առաջ իմ շքախումբի անդամներուն հետ միասին ես եկա ձեր երկիրը: Էջմիածնի Մայր տաճարի Իշման Ս. Սեղանի առաջ աղոթք արտասանելե հետո ուղևորվեցա «Զվարթնոց» օդակայանը, այնտեղ դեմքս դարձուցի դեպի մեր Արարատը վեհանիստ, որ կարծեք լուռ խոսեցավ հետս: Եկա այստեղ՝ գիտնալով անշուշտ, թե ուր կուգամ և վստահ, թե դուք պիտի ընդունեք զիս ջերմությամբ, սիրով, կարոտով: Եվ այդպես ալ եղավ. նույնիսկ ավելին. գերազանցվեցան իմ բոլոր սպասումները:

Քիչ առաջ հարգելի պարոն Ռագուպյան իր խոսքին մեջ քանի մը անգամ կրկնեց, թե ես գալով այստեղ՝ իմ մաղթանքներով, իմ օրհնություններով նոր կյանք բերի, նոր ոգեշնչում, նոր լավատեսություն: Գուցե այդ ճիշտ է, բայց կուզեմ վկայել ձեզի անկեղծորեն, որ դուք ալ ինձի ավելի կյանք տվիք և ավելի զորացուցիք իմ հավատքը իմ առաքելության նկատմամբ: Այս հավաքույթը կոչվեցավ «ողջերթի», այսինքն՝ «երթաք բարով»-ի: Ես այս պահուն այն զգացումը ունիմ, որ երանի ժամանակը կանգ առներ և տակավին վայելեի ձեզ: Ամեն ինչով ես գոհ մնացած եմ և կվերադառնամ իսկապես ավելի խանդավառ, ավելի լավատես դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաքելությունը: Վերադարձիս, երբ օդանավեն իջնեմ «Զվարթնոց» օդակայան, Երևան, նորեն Արարատին պիտի նայիմ և պիտի հարցնեմ, թե ի՞նչ կարծիք ունի իմ առաքելության և ձեր մասին: Պատասխան չպիտի ստանամ անշուշտ, բայց վստահ եմ, որ այդ պատասխանը ձեր հոգիներու մեջ կծաղկի այդ պահուն:

Իմ առաջին երախտագիտության խոսքը կրկին անգամ կուզեմ հայտնել նախ այս երկրին՝ Արգենտինային, ուր ես ընդունվեցա ամենաբարձր պատիվներով պետական ամենահեղինակավոր անձնավորություններու կողմե՝ ի գլուխ ձեր Հանրապետության մեծահարգ նախագահին: Անոնք ընդունեցին Հայոց Կաթողիկոսին բացառիկ պատիվներով, հարգանքով և սրտաբուխ բարեմաղթություններով: Այդ հարգանքը, անշուշտ, իմ միջոցավ կտարածվեր նաև ձեր բոլորի վրա, այստեղ գործող ձեր եկեղեցական ու ազգային միություններուն վրա, ամբողջ հայ համայնքին վրա: Իմ մաղթանքն է, որ դուք միշտ մնաք օրինապահ քաղաքացիները ու միշտ վայելեք հարգանքը և գնահատանքը արգենտինյան ժողովուրդին: Իմ երկրորդ մաղթանքն է, որ հետզհետե առավել ամուր հիմքերու վրա դնեք այստեղ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, ձեր կրթական հաստատությունները և մշակութային միությունները, որոնք այսպան ձևերով մեծ ծավալ ստացած են: Շատ արտասահմանյան համայնքներ կրնան օրինակ առնել ձեզմե:

Ես շատ տպավորված եմ նաև այսօրվա համերգեն, ուր այնքան հաջող կերպով, ճաշակով և հայկական ոգեշնչումով ելույթ ունեցան պարախումբեր, երգչախումբեր և արտասանողներ: Ինչպե՞ս կարելի է մոռնալ Ալմուխյա-

նի երգչախումբը: Շնորհակալություն հետևաբար նաև այս ապրումներուն համար, զոր ես քաղեցի այս հանդեսեն:

Իմ գնահատանքի խոսքը կուղղեմ նաև հարգելի Տիար Հովհաննես Ռազուսյանին, որ ողջերթի խոսք արտասանեց հանուն Հայաստանյայց Եկեղեցվո Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցական կեդրոնական վարչության: Անոր խոսքը բովանդակալից էր և հագեցած մտածումի և զգացումի հավասարակշռությամբ ու ջերմությամբ:

Երեկ ես ձեզի հետ մեկտեղ սուրբ պատարագի ավարտին աղոթեցի Սարդարապատի ճակատամարտի հերոսներու հոգիներուն խաղաղության համար, հերոսներ, որոնք իրենց կյանքը զոհեցին մեր հայրենիքի փրկության և հայ պետականության վերականգնման ի խնդիր: Ես չեմ կրնար ձեզմե բաժնվիլ առանց քանի մը խոսք ալ իմ կողմե ավելցնելու՝ ոգեկոչելու համար Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի հաղթանակները: Սարդարապատի ճակատամարտը առանձնացած երևույթ մը չէ հայոց պատմության ճամփուն վրա. ընդհակառակն, այդ ճակատամարտը ուղիղ գծով պսակավորումն է հայ ազատագրական շարժումին, որ երկու հարյուր տարիներ առաջ սկսավ սաղմնավորվիլ, ինչպես գիտեք, և տարբեր փուլերե անցնելով ու բազում ոգբերգություններ ապրելե հետո, վերջապես հասավ իր սրբազան նպատակի իրագործման, իր քաջ որդվոց սուրբ արյունով:

Հայ ազատագրական շարժումը պատահական երևույթ չէր, այլ պատմականորեն բնական երևույթ էր, արդար և անհրաժեշտ: Այդպես է, որ 1918 թ. մայիսի վերջերուն, հայաստանցի ժողովուրդը ճակատ առ ճակատ կանգնեցավ դարավոր թշնամիին դեմ: Մահու և կենաց ժամը հասած էր, և հակառակ այն ատեն Հայաստանի ժողովուրդի շատ ծանր պայմաններուն, շատ ավելի փոքրաթիվ բանակով, գրեթե առանց բավարար զինամթերքի, առանց սնունդի, առանց ռազմական մասնագետներու, ամբողջ ժողովուրդը իր բոլոր խավերով ոտքի կանգնեցավ, նաև հոգևորականներու առաջնորդությամբ կրցավ հուժկու հարված հասցնել մայիսի 22-ի, 23-ի օրերուն: Առաջին անգամն էր, որ վեց հարյուր տարի ստրկութենե հետո յաթաղանը գետին ինկավ և կիսալուսնի դրոշակը հայ զինվորին առջև խոնարհվեցավ:

Տարիներ առաջ, իմ կաթողիկոսության առաջին շրջանին, հաճախ առիթը ունեցած եմ հանդիպելու և խոսելու հայերու հետ, որոնք մասնակցած են Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի կռիվներուն: Բոլորն ալ կվկայեին, թե իսկապես հայոց հաղթանակը հրաշքի համազոր իրողություն եղավ: Այդ հրաշքը տեղի ունեցավ հավանաբար ոչ շնորհիվ հայոց ռազմական ուժին, այլ՝ հոգեկան ուժին, հաղթելու վճռականության: Այդպես է, որ մայիսյան վերջին օրերուն նոր հորիզոն բացվեցավ հայոց պատմության ճանապարհի վրա, և հիմնվեցավ հայկական պետությունը: Աշխարհի վրա մենք ալ անուն մը ունեցանք իբրև ազգություն, որ Սևրի դաշնագրով նվիրագործվեցավ բոլոր պետություններու ստորագրությամբ:

Հայ ազատագրական շարժումի ճանապարհին, այս հաղթանակեն հետո, անհրաժեշտ էր երկիրը վերականգնել, վերաշինել, որովհետև դուք գիտեք, թե ինչպիսի ողբերգական վիճակի մեջ կգտնվեր այդ տարիներուն Հայաստանը, մանավանդ Վասպուրականի ժողովուրդի գաղթեն հետո: Հայաստանցի ծերունիներե լսած եմ այնպիսի սրտաճմլիկ պատմություններ այդ տարիներուն Հայաստանի հայերու վիճակի մասին: Ինչքա՜ն զոհեր եղած են հիվանդություններու, քաղցի, տուն-տեղ չունենալու հետևանքով: Երևանի փողոցները լեցուն էին անտեր, անտիրական, թափառող որբերով և ամեն առավոտ

կանուխ սև կառքեր կպտտեին, որպեսզի մահացածներու դիակները հավաքեն և հավաքական գերեզմաններու մեջ թաղեն: Ահա այսպիսի ողբերգական պայմաններու մեջ էր, որ հայ ժողովուրդը կարողացավ այդ հաղթանակը ձեռք բերել և ապա սկսիլ հայրենիքի վերաշինության գործին: Եվ Հայաստանի Հանրապետության շրջանին նույնպես հայ ժողովուրդը ծանր կացություններու մեջ գտնվեցավ: Այդ երկու տարիներու ընթացքին մեր դրացիները չորս անգամ հարձակում գործեցին Հայաստանի վրա, որովհետև չէին հանդուրժեր գոյությունը հայ պետականության մը: Երեք հարձակումներուն հայերը կարողացան դիմադրել և ետ մղել թշնամիները, բայց չորրորդ հարվածը, այս անգամ Արևմուտքեն, Կարաբեքիր փաշայի ղեկավարությամբ, 1920-ի աշնան, մահացու եղավ Հայաստանի համար: Հայ ժողովուրդը նորեն մնացած էր մինակ և անօգնական: Անգլիացիները այդ օրերուն Վրաստանի մեջ էին, մեր դաշնակիցներն էին, Սևրի դաշնագրի տակ ստորագրողները, խոստումներ տվողներն էին, բայց իրենց մատը մատին չկարկին, որպեսզի պաշտպանեն Հայաստանը այդ ահավոր վտանգեն: Կարաբեքիր փաշան գրավեց Կարսը, մտավ Հայաստան, նստավ Ալեքսանդրապոլ քաղաքը և պարտադրեց իր սև դաշնագիրը, որ կկոչվի «Ալեքսանդրապոլի դաշնագիր», որով փոքրիկ Հայաստանը թուրքական ողորմածության կիանձնվեր: Այդ ճակատագրական պահուն էր, որ իշխանության փոփոխություն եղավ: Հանրապետության կառավարությունը պաշտոնապես իշխանությունը հանձնեց ուրիշ նոր վարգացող հայկական ուժերու, որոնք Հյուսիսի մեր դարավոր բարեկամ ժողովուրդի՝ ռուս ժողովուրդի վինվորական օգնությամբ կարողացան դուրս շպրտել Կարաբեքիր փաշայի բանակները և պատառ-պատառ ընել Ալեքսանդրապոլի դաշնագիրը: Եթե այդ հեղաշրջումը չկատարվեր, Հայաստանը, հայ ժողովուրդը պիտի կորսնցներ այն, ինչ որ շահած էր Սարդարապատով: Փրկված Հայաստանի առջև բացվեցան նոր կյանքի պայմանները, խաղաղ վերաշինության, լարված աշխատանքի տարիները, որպեսզի կամաց-կամաց մեր երկիրը վերակառուցվեր, և մեր ժողովուրդը բուժեր իր խորունկ վերքերը:

Մարիետտա Շահինյանի «Հիդրոկայան» կոչված վեպը կա: Այդ վեպը գեղարվեստական տեսակետեն բացառիկ արժեք մը չի ներկայացներ, բայց կներկայացնե իրական պատկերը այդ տարիներու Հայաստանի կյանքին, հայ ժողովուրդի կյանքին: Վեպը գրված է 1924—25-ին, երբ Մարիետտա Շահինյան հատուկ եկած էր Հայաստան առաջին հիդրոկայանի շինության ներկա գտնվելու իբրև թղթակից և հետո վեպի մը ձևով ներկայացուցած էր այդ հիդրոկայանի շինության գեղարվեստական պատմությունը: Վեպին մեջ կպատկերվին այն ահավոր դժվարությունները, որոնց առջև գտնված են հայերը, մինչև որ կրցած են առաջին հիդրոկայանը կառուցել արյուն քրտինքով, մեծ զրկանքներով, գրեթե կիսաքաղց վիճակի մեջ:

Տակավ հաղթահարվեցան սկզբնական տարիներու դժվարությունները, և շնորհիվ Խորհրդային Միության նյութական և թեքնիկական մեծածավալ օգնությանց, մեր ժողովուրդը հաջողեցավ վերաշինել իր քայքայված երկիրը: Ողբի և որբի հայրենիքը վերածվեցավ աշխատանքի, կառուցումի ու ազգային մշակույթի ծաղկումի հայրենիքի:

Վերաշինված ու հկորացած արդի Հայաստանը նաև մեր ամուր պատվանդանն է մեր ազգի ապագա երազանքներու իրականացման:

Այսօր մեզմե ոչ ոք չի կրնար ստուգությամբ կանխատեսել մեր արդար երազանքներու կենսագործման ժամանակը, սակայն լավատեսությամբ պետք է ամուր պահպանենք մեր հույսն ու հավատքը:



Գարեգին Նժդեհի հուշարձանի

Այս դարու սկզբին, եթե չեմ սխալիր՝ 1901 թվականին, ցարական Ռուսաստանի արտաքին գործոց նախարարը այցելած է Վենետիկ՝ Ս. Ղազար կղզին: Մխիթարյան հայրերը այդ մեծ երկրի արտաքին գործոց նախարարին ընդունած են մեծ պատիվներով, հարգանքներով, մանավանդ որ այդ անձնավորությունը ճանչցված էր իբրև հայասեր դիվանագետ: Նախարարը ամեն ինչ տեսնելե հետո, մեկնելե առաջ կըսե. «Հոգևոր հայրեր, ամեն ինչ հիանալի է, կգնահատեմ ձեր գործը: Բայց գիտեք, ցավով պիտի ըսեմ ձեզի, որ ձեր ազգը ապագա չունի այս աշխարհի վրա: Նախ՝ օր մը չէ օր մը թուրքերը ձեզ պիտի բնաջնջեն, և ափսոս պիտի ըլլա ձեր ազգին, կցավիմ»:

Այդ հոռետեսական արտահայտություններուն ի պատասխան ծերունի միաբան մը կպատասխանե. «Տեր նախարար, այնուամենայնիվ մենք մեր աշխատանքը պիտի շարունակենք, որովհետև նախ մեր հույսը դրած ենք Աստուծո վրա, երկրորդ՝ մեր հույսը դրած ենք ժամանակներու հարափոփոխ ընթացքի վրա և երրորդ՝ մեր հույսը դրած ենք մեր ուժերուն վրա...»: Այդ պատասխանը տվող ծերունին եղած է հայր Ալիշան: Կխորհիմ թե այժմեական է, ուղեցույց է մեզի համար նաև այսօր Ալիշանի մարգարեությունը: Մանավանդ որ մենք այսօր, իբրև ժողովուրդ, ավելի ամուր պատվանդանի վրա կգտնվինք մեր ներկա վերաշինված մայր հայրենիքով:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մայիսի 22-ին, երեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը այցելում է Բուենոս Այրեսի քաղաքագլուխ Խուլիո Սալիերին և ջերմ զրույց ունենում նրա հետ:

*
* *

Նույն օրը, ժամը 12-ին, Նորին Սրբությունը Բուենոս Այրեսի հայոց թեմի կենտրոնական վարչության անդամների ուղեկցությամբ այցելում է Արգենտինայի ազգային հերոս զորավար Սան Մարտինի հուշարձանին և ծաղկեպսակ զետեղում այնտեղ:

*
* *

Նույն օրը, ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է Արգենտինայի ներքին գործերի մինիստր պրն. Անտոնիո Տրոպոլիին: Մեծարգո մինիստրի և Հայոց Հայրապետի միջև տեղի է ունենում զրույց՝ բարեկամական հարգալից մթնոլորտում:

*
* *

Նույն օրը, ժամը 19-ին, Վեհափառ Հայրապետը այցելում է արտաքին գործերի մինիստր պրն. Դանտե Կապուտոյին և ջերմ զրույց ունենում նրա հետ: